քական մարմին մը պիտի ըլլային, եթէ **կրօնական ազատութիւն շնորհուած ըլլար անոնց**,, ։

Աւետաբեր

Սուտ է Հայերն իրենք չէին մոռնար իրենց Հայութիւն, և չպիտի ուրանային իրենց մայրենի Եկեղեցին՝ եթէ միսիոնարք անոնց հետ խղճի ազատութեան հակառակ չվարուէին, և եթէ սընոտի շահու յոյսեր նոցա հոգւոյն առջև չդնէին. և արդարև անոնք չպիտի բաժնուէին Հայաստանեայց Եկեղեցիէն՝ եթէ միսիոնարք կարենային պլուստեք իրենց հացն ու թօշակը ճարել . . . ։ Ո՞չ ապաքէն Հայ ժողովուրդն է իրենց ապրուստի միջոցն և այս չէ՞ իւր կրօնական ազատութիւն կոչած՝ որ մենք կիմանանք հաց ու բարձ (իշխանութիւն) միսիոնարական խումբին.

''Աւետարանական Հայք գիտեն թէ **իրենց ուխտը պատուական** է, սակայն գիտեն նաև թէ ճշմարտութիւնը, և իրենց հոգւոյն փրկութիւնը՝ որ այն ճշմարտութիւնը ընդունելէ կախում ունի՝ աւելի պատուական է,, ։

Նոյն

Միայն աւետարանական Հայք չէ, այլ բոլոր աշխարհ և դու իսկ խղճովդ կվկայես եղբայր Աւետաբեր, ''որ Հայք Ազգ են ընտիր Թագաւորութիւն, Քահանայութիւն, Ազգ սուրբ ժողովուրդ սեպհական,, *). իսկ այդ քարոզած ճըշմարտութիւնդ մեզ կթուի՝ թէ նոր ըլլալու է, որովհետև Հայ ժողովուրդն՝ 19 դարէ ի վեր այն երկնից միակ ճշմարտութեան հաւատաց և կընթանայ անխոտոր այն արդարութեան ճանապարհէն՝ որ ինք Աստուածորդին ասաց ''Ես իսկ եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք,,. Ձեր քարոզած ո՞ր ճշմարտութիւնն է. աշխարհի մէջ 19 դար յառաջն երևցաւ մեր քարոզած ճշմարտութիւնն՝ որ խեղճուկ աւանակի մը վրայ յեցած երևցաւ Սաղիմայ մէջ և ի Գողգոթայ մեռաւ ի Խաչին. մի գուցէ՞ ճշմարտութիւն ըսածնիդ դարձեալ միսիոնարացդ ապրուստն է .

Նոյն

## ՆՈՒԷՐ

Հետևեալը ուրախութեամբ կարդացինք **Փօստ** լրագրոյ մէջ։

Մեր բարեպաշտիկ ազգայիններէն Թախտապուրունեան մեծապատիւ Աթաղան էֆէնտի որուն բաժին հանեց բաղդը Ռումելիի վերջին վիճակահանութեան առաջին պարգևն, *) — բարեհաճեր է գրով ծանուցանել Հիւանդանոցի մեծարգոյ Հոգաբարձութեան, թէ որոշած է 300 լիրա նուիրել ի նպաստ Հիւանդանոցի.

Գոհութեամբ կտեսնեմք որ Աթաղան էֆէնտի բաղդին այս ձոխ բարիքը վայելել սկսած առեն ազգին աղքատն ու տնանկը կըյիշէ անմիջապէս.

Աներկմիտ եմք, թէ ուրիշ այսպիսի երկնահաճոյ բարեգործութիւններ ալ կընէ՝ գիտելով միշտ իւր բաղդն յօգուտ ի կիր արկանել իմաստուն տնտեսութեամբ.

(*) Ա. Պետ. Բ. Թ.

(*) 600000 (վեց հարիւր հազար) փրանք.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.